

TK & PARTNERS

WEEKLY CLIENT ALERT



## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Խորհրդարանական նախագծեր

Կառավարության որոշումներ

Դատական պրակտիկա

Ֆինանսական ոլորտ

Հարկային օրենսդրություն



# ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՕՐԻՆԱԳԾԵՐ

## **Բանկերն ու վարկային կազմակերպությունները Ֆինանսական համակարգի հաշտարարին (ՖՀՀ) վճարելու են հավասարաչափ**

ՀՀ օրենսդրության համաձայն Ֆինանսական համակարգի կազմակերպություններն պարտավորված են իրականացնել տարեկան պարտադիր վճարներ ՖՀՀ-ին: Համապատասխանաբար՝ բանկերը վճարում են իրենց ակտիվների 0.01 տոկոսը, իսկ վարկային կազմակերպությունները՝ 0.07 տոկոսը: Նախագծով առաջարկվում է երկուսի համար էլ սահմանել նույնական տոկոս՝ 0.01:

Ավելին՝ [հղումով](#):

## **Իրավաբանական անձինք և անհատ ձեռնարկատերերը ևս կարող են դիմել ՖՀՀ-ին:**

Ներկայումս ՖՀՀ-ին կարող են դիմել միայն ֆիզիկական անձինք: Նախագծով առաջարկվում է ընդլայնել ՖՀՀ-ի դիմումատուների շրջանակը՝ այդպիսի հնարավորություն տրամադրելով նաև իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին:

Ավելին՝ [հղումով](#):

## **Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի նոր իրավասությունները**

Եթե Դուք հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող պաշտոնատար անձ եք, ապա հնարավոր է, որ այսուհետ Ձեր գաղտնի տեղեկատվությունը հասանելի դառնա Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին: «Գաղտնի տեղեկատվություն» հասկացությունը, մասնավորապես, ներառում է բանկային և ապահովագրական գաղտնիքները, Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից արժեթղթերի հետ կատարված գործարքների վերաբերյալ ծառայողական տեղեկությունները, վարկային տեղեկատվությունը և վարկային պատմությունը: Մարտի 5-ին օրենսդրական նախաձեռնությունների փաթեթն առաջին ընթերցմամբ ընդունվեցլ է Ազգային ժողովի կողմից:

Ավելին՝ [հղումով](#):

## Կրեդիտավորման պայմանագիր կնքելու ժամային սահմանափակում

Մեկ այլ նախագծով առաջարկվում է արգելել սպառողական կրեդիտավորման պայմանագրի կնքումը ժամը 22:00-ից մինչև 07:00-ն ընկած ժամանակահատվածում: «Սպառողական կրեդիտավորման մասի» օրենքում լրացում կատարելու նախագիծն Ազգային ժողով է ներկայացվել սույն թվականի մարտի 5-ին:

Ավելին՝ [հղումով](#):



## ԿԱՌԱՎԱՐՈՒԹ- ՅԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ

### Սպառողական կրեդիտի տարեկան փաստացի տոկոսադրույքի առավելագույն չափ

Սպառողական կրեդիտավորման ոլորտում առաջարկվում է սահմանել տարեկան փաստացի տոկոսադրույքի առավելագույն շեմ: Վերջինս չի կարող գերազանցել պայմանագրի կնքման օրվա դրությամբ ՀՀ Կենտրոնական Բանկի կողմից սահմանած բանկային տոկոսի հաշվարկային դրույքի կրկնապատիկը բանկերի և օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի կողմից տրամադրված կրեդիտների համար, և վեցապատիկը՝ վարկային կազմակերպությունների և գրավատների համար: Նման կարգավորմամբ հնարավոր կլինի վերահսկել ֆինանսական ընկերությունների կողմից տրամադրվող սպառողական վարկերի տոկոսադրույքները, որոնք շատ հաճախ անհասկանալի և անհիմն բարձր են: «Սպառողական կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքում սույն օրենսդրական փոփոխության նախագիծը հաստատվել է ՀՀ Կառավարության կողմից և կքննարկվի ՀՀ Ազգային ժողովում:

Ավելին՝ [հղումով](#):

## ԴԱՏԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱ

### ՀՀ Սահմանադրական դատարանի մեկնաբանությունը ոչ նյութական վնասի հատուցման մասին

ՀՀ օրենսդրությամբ սահմանված է, որ հիմնարար իրավունքների խախտման և անարդարացի դատապարտման հաստատման դեպքում ոչ նյութական վնասի հատուցման առավելագույն սահմանաչափը կարող է բացառիկ դեպքերում





գերազանցվել, եթե պատճառված վնասի արդյունքում առաջացել են ծանր հետևանքներ: Սահմանադրական դատարանը նշել է, որ հիմնարար իրավունքների խախտման և անարդարացի դատապարտման հաստատված ցանկացած դեպք ինքնին բացառիկ է և դրա «արտասովորությունը» հիմնավորելու լրացուցիչ պարտականություն անձի համար չի կարող նախատեսվել: «Բացառիկ դեպքերում» բառակապակցության ամրագրումը վերջինիս կողմից ճանաչվել է հակասահմանադրական: Իսկ «ծանր հետևանքներ» հասկացությունն, ըստ Սահմանադրական դատարանի, յուրաքանչյուր կոնկրետ դեպքում ենթակա է գնահատման դատարանի կողմից՝ հիմնվելով կոնկրետ գործի բոլոր փաստական հանգամանքների համադրված վերլուծության վրա: Այսինքն, պատճառված վնասի արդյունքում առաջացած հետևանքների ծանր լինել կամ չլինելը յուրաքանչյուր գործով որոշում է գործը բննող դատարանը:

Ավելին՝ [հղումով](#):

## ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՈԼՈՐՏ

### Տոկոսները կհաշվեգրվեն ավանդի բոլոր օրերի համար

Քաղաքացիական օրենսգրքում կատարվելիք փոփոխությունների ուժով բանկային ավանդների տոկոսները հավելագրվում են ավանդը բանկ մուտք լինելու, այլ ոչ թե դրան հաջորդող օրվանից: Մարտի 3-ին նախագիծը երկրորդ ընթերցմամբ ընդունվել է Ազգային ժողովում:

Ավելին՝ [հղումով](#):

### Սպառողական կրեդիտավորման օրենսդրության այլ սպասվող փոփոխություններ

Սպառողական կրեդիտների գովազդը թույլատրելի կլինի բացառությամբ կրեդիտավորողի պաշտոնական կայքում ,սոցիալական ցանցի էջում բջջային հավելվածում և գործունեության սրահների ներսում: Գովազդը չպետք է տարեկան տոկոսադրույքի վերաբերյալ որևէ շփոթեցնող կամ մոլորեցնող տեղեկատվություն պարունակի : Կենտրոնական բանկը կսահմանի մինչև երեք ամիս ժամկետով կնքվող մինչև 200,000 ՀՀ դրամի չափով սպառողական վարկերի համար պարտադիր պահանջներ: Բանկերին և վարկային կազմակերպություններին կարգելվի ֆինանսական ծառայություններ մատուցել իրենց մասնաճյուղերի տարածքներից դուրս: Վերոնշյալ փոփոխությունների նախագծերը գտնվում են Ազգային ժողովում:

Ավելին՝ [հղումով](#):

Ավելին՝ [հղումով](#):

Ավելին՝ [հղումով](#):

# ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆ

## Նոր պարտավորություններ փոխկապակցված հարկ վճարողների համար

Հարկային օրենսդրության նոր կարգավորումներով, փոխկապակցված հարկ վճարող տնտեսվարող սուբյեկտը, ում հարկային տարվա ընթացքում կատարված գործարքների ընդհանուր արժեքը գերազանցում է 200 միլիոն դրամը, կունենա նոր պարտավորություններ: Քանի որ այսուհետ նման գործարքների նկատմամբ կկիրառվեն տրանսֆերային գնագոյացման կանոնները, տնտեսվարող սուբյեկտը պարտավորված կլինի այս գործարքների վերաբերյալ ծանուցում ներկայացնել հարկային մարմին: Այս կարգավորումները ՀՀ-ում գործում են 2020 թվականի հունվարի 1-ից:

Ավելին՝ [հղումով](#):

#YourSupportTeam

